ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի փետրվարի 09-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/25»

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար էլեկտրատեխնիկական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/25՝ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 08-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 09-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1 Հայտնում ենք, որ մի շարք կազմակերպություններ ներմուծում են օրինակ՝ միայն 10վտ-ոց լեդ լամպեր, մյուսները միայն 12վտ-ոց լամպեր/հարկ ենք համարում նշել, որ նշված լամպերի տարբերությունները անտեսանելի և աննշան են/: Հետևաբար նշելով կոնկրետ վատ ստացվում է, որ սահմանափակվում է մյուս մասնակիցների մասնակցությունը /ինչը կարող էր բերել ավելի շահավետ և խնայող գնումների/և ըստ էության խախտվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև 13-րդ հոդվածի պահանջները: Վերոգրյալով պայմանավորված առաջարկում ենք հրավերում կատարել փոփոխություն և տեխնիկական բնութագրերը սահմանել միջակայքով, օրինակ 17-րդ չափաբաժնով սահմանված <<10 Վտ լամպ, E27, լուսադիոդային, 175-265 Վ: Երաշխիքային ժամկետը մեկ տարի>> տեխնիկական բնութագրի փոխարեն սահմանել <<8-10 Վտ լամպ, E27, լուսադիոդային, 175-265 Վ: Երաշխիքային ժամկետը մեկ տարի>>:

Պարզաբանում N 1 Հարգելի մասնակից, եթե կան մասնակիցներ, որոնք ներմուծում են միայն 10վտ-ոց լեդ լամպեր, իսկ մյուսները միայն 12վտ-ոց լամպեր/դա դեռ չի նշանակում, որ խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև 13-րդ հոդվածով նախատեսված պահանջները: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Դ.Միերյանին:

Հեռախոս՝ 060710013:
Էլեկոտրանային փոստ՝ gnumner@ysu.am:

Արձանագրություն N 2
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ կարիքների համար էլեկտրատեխնիկական ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 09.02.2023թ.

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ենգիդունյան
հանձնաժողովի անդամներ՝ Դ.Կարախանյան
Թ.Համբարձումյան
հանձնաժողովի քարտուղար՝ Դ.Միերյան

1.Էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի պարզաբանման տեքստը հաստատելու մասին

Հիմք ընդունելով 2023 թվականի փետրվարի 08-ին հրավերի վերաբերյալ ստացված հարցումները և, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց՝

Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը և հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունը
Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել էլեկտրոնային աճուրդի ավարտից հետո:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ.Ենգիդունյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Դ.Կարախանյան

_____ Թ.Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Դ.Միերյան